


ՊԱՅՄԱՆՔ

ՊՈՒԼԱՐԻՍ
Տարեկան . . 12 Ֆր.
Վեցամսեայ . . 6 "
ԱՐՏԱՍԱՀՄԱՆ
Իրկու քիւ մէկ ծրարով
Տարեկան . . 14 Ֆր.
Վեցամսեայ . . 7 "
ԱՄԵՐԻԿԱ
Տարեկան 2,60 Տօլար
Վեցամսեայ 1,50 "
Կ Ա Ն Խ Ի Կ



Լ Ր Ա Գ Ի Ր

Ա Ձ Գ Ա Յ Ի Ն Ե Ի Ք Ա Ղ Ա Ք Ա Կ Ա Ն

ԵՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԵՆ ՉՈՐԵՔՇԱՐԹԻ ԵՒ ՇԱՐԱԹ

Հ Ա Ս Յ Է

Rédaction du journal

„Ipravunk“

VARNA (Bulgarie)

Редакция

на вѣстникъ

„Иправункъ“

ВАРНА (България)

Գրութիւնք եւս

չեն տրուիր

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԱՆՑՈՒԴԱՐՁՔ

Մերմակայ ապագան

Պաշտօնական երկիրներու և մասնաւորապէս Պուլկարիոյ ու Մակեդոնիոյ մերձակայ ապագային նկատմամբ քաղաքական շատ մը կարծիքներ կը յայտնուին: Վերջին օրերս այդ բնից այլոց կարծիքները աւելի խտանալով, կուգան սա հաւատքին մօտենալ թէ՛ անպատճառ ի մօտոյ Մակեդոնիոյ և Պուլկարիոյ վիճակին նոր փոփոխութիւններ պիտի ըլլան Ռուսիոյ նախաձեռնութեամբ:

Այս հաւանականութեան ուժ տուող հետեւեալ պատճառները թուեց մեզ պուլկար բարեկամ մը, սպասէս:

«Ռուսիոյ և Աւստրիոյ վերջին համաձայնութիւնը թուրքիոյ քրիստոնեաներուն վիճակը բարեփոխելու սահմանուած է. այս ճշմարտութեան անհերքելի ապացոյցն է անցեալ օր այդ երկու պետութեանց դեսպաններուն Սուլթանին ըրած խիստ դիմումը, որով թուրքիոյ եւրոպական նահանգներուն բարենորոգում պահանջեցին. Սուլթանն ալ հարկադրուեցաւ նախարարներէ յանձնարարութեամբ մը կազմել: Բայց Չարի կառավարութիւնը գիտէ թէ թուրքը ինք իր ձեռքով բարենորոգում չը գործադրեր, ուստի դեսպաններուն այդ պաշտօնական դիմումը դիւանագիտական ձեւակերպութիւն մըն էր միայն:

«Մակեդոնական խնդիրը ուրիշ կերպով լուծուելու ճամբուն մէջ մտած է այսօր. ինչպէս կերեալ, բարձրէն տրուած խորհուրդի մը համեմատ, Յոյները ու Սերպերը սկսած են վերջին օրերս իրենց թերթերով ու պաշտօնական յարաբերութիւններով մեզ, Պուլկարներու, բարեկամանալ և խոստովանել Մակեդոնիոյ մէջ պուլկար տարրին գերակշռութիւնը: Այլեւս Յոյները և Սերպերը չեն քննադատեր մեր Մակեդոնական Գոմիթէին օրօնօմիկի ծրագիրը ու գործելու հղանակները: Անշուշտ կըմբռնէք թէ այս յանկարծական փո-

փոխութիւնը բարձրագոյն խորհուրդի մը ու զգաստացուցիչ սպառնալիքի մը հետեւեալ ըլլալու է:

«Գալով Մակեդոնական Գոմիթէին գործառնութիւններուն. սա ճիշդը արձակած է մինչեւ Աթէնք ու Պէլկարտ. իր ծրագիրը Պուլկարական չէ, այլ Մակեդոնական է. այսինքն «Մակեդոնիոյ Մակեդոնացուց համար»: Այս սկզբունքը համակրանք գտած է Յունաստան, Սերպիա և Մակեդոնիոյ ամբողջ քրիստոնեայ տարրերուն մէջ: Ասոր Եւրոպան ալ հակառակելու բնաւ պատճառ մը չունի, քանի որ իր ստորագրած Պեղիքի դաշնագրին տրամադրութիւնն ալ նոյնն է:

«Նախկին հրամանատար Եանքովի առաջնորդութեամբ անցեալները Մակեդոնիա անցնող 350 հոգիներ պուլկարական խումբը այսօր 1200ի բարձրացած է. սա իր գրաւած տեղերուն վրայ բացարձակ կիշխէ ու թուրք բանակը անօգուտ կը նկատէ անոնց վրայ յարձակել: Նոյնպէս Մակեդոնիոյ ամէն կողմը գտնուող յեղափոխական տեղական խումբերը աչքերին դէպի Շարի յառած պատրաստ վիճակի մէջ կը սպասեն Սերպերէ 6ին, յորում պիտի կատարուի նորակառոյց ռուսական վանքին օծումը, ի ներկայութեան պուլկար բանակին, բազմաթիւ ռուս հրամանատարներու և սպաներու, ընդ նախագահութեամբ մեծ դուքս Նիքօլայ Նիքօլայիչի, որ Չարը պիտի ներկայացնէ: Պէտք է յիշել թէ Սերպերը 6ը այն նշանաւոր օրն է յորում, 1885ին Արեւելեան Րուսիան միացաւ բուն Պուլկարիոյ:

«Այս այդ տարեգարծի նուիրականութիւնը, կերեալ թէ, նոր նուիրագործում մը պիտի կրէ այս տարի նորագոյն փոփոխութիւններով»:

Մեր պուլկար բարեկամը սկսաւ թուել Պուլկարիոյ մէջ երեւցող հետեւեալ նոր շարժումները:

Ա. Բէրնիք ածխահանքէն օրական 4-5 կառավարութեամբ ածուխ փոխադրուելը Պուլկար և Չինկեանէ իսկէլէսի նաւամատոյցները:

Բ. Սերպերը 6ին յաջորդող

օրերուն կատարուելիք զինուորական փորձերուն համար շրջա զօրաբաժին շարժման մէջ դրուելէ զատ, 1895էն մինչեւ 1900ի բոլոր պահեստի զինուորներուն 48 ժամէն պատրաստ գտնուելու համար զեկուցագրեր ցրուելը:

Գ. Սե. Ծովի ռուսական նաւատորմի Վառնա և Պուլկար այցելելը:

«Այս շարժումներէն և առայժմ հրատարակել անյարմար դատուած երեւոյթներէ դատելով կը կարծենք թէ, ըսաւ մեր պուլկար բարեկամը, յառաջիկայ Սերպ. 6ին, երբ ռուսական վանքի օծումին առթիւ եկեղեցական արարողութեան տոնն յիշատակութիւն պիտի ըլլայ թագաւորաց և իշխանաց անուններուն, ռուս եպիսկոպոսը առաջին անգամ իշխան Ֆէրտինանտը «թագաւոր Պուլկարիոյ» կոչէ»:

Մեր բարեկամին ոգեւորութեամբ արտայայտած այս կարծիքները որչափ որ ալ լաւատեսի մը կարծիքները են, բայց վերը թուուած երեւոյթները և Պուլկարիոյ մէջ երեւցող նորանոր շարժումները ցոյց կուտան թէ իսկապէս ժամանակը ծննդաբերական երկունքի մէջ է. սակայն որոշապէս յայտնի չէ թէ սա՞ ռուսացող լեռան պէս, չնչին մօ՛ւկ մը պիտի ծնի, թէ առիւծի ձագ մը:

ՃԱՆՏԱԿՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ
ՃԱՐՔ ՄԸ

Դաշնակցական կարգ մը միամիտ գործիքներու անցեալ տարւոյ սխաղագործութիւնները չեն որ հոս պիտի թուի, Ռուսչուք Ղեւոնթ Սթանպուլեանի վրայ եղած փորձերը վերջիչեցնել չէ նպատակ. այլ վերջերս, սա վերջին երկու ամիսներու մէջ, գործուած թարմ շահատակութիւններն են որ կուգամ մատնանշել:

2. Երկու ամիս առաջ, Սիվիլի մէջ, ռեվոլյուցիոն հարուածներով մահացնել կը փորձէ Մեսրոպ վարժապետեան անունով դաշնակցա-

կան մը հնչակեան Արմէն Շիտան. եանը, որուն յանցանքն կըլլայ իր պատկանած կուսակցութեան դրամը դաշնակցականներու յանձնուելու դէմ կարծիք յայտնելը:

2. Քանի մը օր վերջ նոյն վարժապետեանը գրէ թէ նոյնանման պատճառով Պուլկարի մէջ կը ծեծէ Տուրսանեան անունով հայ մըն ալ:

3. Երկու շաբաթ առաջ Ֆիլիպպէի մէջ դաշնակցականները գիշերայն կը ծեծեն ու արիւնլուալ կընեն Յակոբ խաչէրեանը, հայ վաճառատան մը տնօրէն, որ մեր ժած է դաշնակցականաց դրամ տալ:

4. Այս երկու շաբաթի օր վառնայի ծովագետայ պարտէզին մէջ ծանօթ սրիկայ մը, որ դաշնակցականի անունը կը կրէ, զաւազան ի ձեռին կը յարձակի Արմենակեան երիտասարդի մը վրայ ու անոր թեւին հարուած մը կ'իջեցնէ, բայց երկրորդ անգամ զարնել չը յաջողի ու կը ձերբակալուի:

Թէ ինչո՞ւ կը գործուին այս եւեթիւթիւթիւնները: Պատճառը շատ պարզ է ու յայտնի. որովհետեւ այս տեղերի հիմարիւողներէ ոմանք տարբեր յեղափոխական կուսակցութեան կը պատկանին, ոմանք վստահելի մարմնոյ մը գոյութիւնը կամ կուսակցութեանց միացումը ու մաքրագործումը կը պահանջեն:

Պուլկարիոյ դաշնակցականները իրենց այս նոր գործունէութեամբ կուգան հայ ժողովուրդը սա համոզման բերել թէ՛

Դաշնակցութիւնը որոշած է

1. Տարբեր յեղ. կուսակցութեանց հետ անհաշտ ապրիլ ու անոնց չը միանալ:

2. Հալածել ուրիշ կուսակցութեանց վերաբերողները և եղբայրասպան կռիւ մղել անոնց դէմ:

3. Բռնի դրամ հաւաքել, առանց վստահութիւն ներշնչելու ժողովուրդին, որուն բացարձակ իրաւունքն է իր տուած դրամին օգտակարապէս գործածուելու մասին նախ համոզում գոյացնել:

Արդ, նկատելով թէ դաշնակցա-

կաններուն այս եղանակով պորժու-
նէութիւնը ազգը պատկանելու,
եղբայրասպան կռիւ յարուցանելու
և Ս. Դատը բոլորովին վտանգե-
լու միայն կը ծառայէ, կոչ կընեմ
իմ Միութենական ընկերներուս,
Հնչուկեան և Արմենական յեղափո-
խական հայրենակիցներուս և չէ-
զոք ժողովուրդին որ ամէն քա-
ղաքի ու ամէն գիւղի մէջ ձեռք
ձեռքի տան և ամէն ճիգ թա-
փեն դաշնակցականներու այս ազ-
գայնաս ընթացքը կասեցնելու,
ամէն խոհեմ ու յանդուգն միջոց-
ներով. որպէս զի անոնք համոզ-
ուին թէ իրենց չը պիտի ձգուի
ամբողջ ազգի մը բաղդին հետ ու-
ղածնուն պէս խաղալ և չորս հինգ
միլիոնէ բաղկացեալ հայ ազգին
դատը իրենց քմահաճոյքին գոր-
ծիք ընել:

Մեր վերջին խօսքը պէտք է
այս ըլլայ անոնց՝

— Միացէք ու ձեր մէջի աղ-
տոտները մաքրեցէք որ չէզոք ու
մաքուր տարրն ալ գայ գործին
մտնել և սկսի սիրայօժար նպաս-
տել: Եթէ ոչ, քաշուեցէ՛ք հրա-
պարակէն:

Միութենական մը

ԹՐԳԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ

(Էսք-Ուէսք Գործակալութիւնս՝
երեք օր առաջ հետեւեալ թղթակ-
ցութիւնն ստացաւ և Պոլիսէն
մենք ասոր կարելի մասերը միայն
առաջ կը բերենք):

Կ. Պոլիս, 22 Յուլիս. — Քանի
մը օրերէ ի վեր Բերայի փողոց-
ներուն մէջ բազմաթիւ լրտեսներ
և ծպտեալ ոստիկաններ կը պը-
տըտին. — մեր անցեալ թղթակցու-
թեան մէջ կըսէինք թէ լրտեսնե-
րու կարելիութիւնը մըն ալ Բա-
րիկի մէջ բոյն դրած է նորէն,
որն այնպիսի փառաւոր քաջագոր-
ծութիւններ կը կատարէ որոցմէ
անմահ Տօն Քիւսթը պիտի նա-
խանձէր, անկասկած, եթէ այսօր
ապրէր:

Ա. ՇԻՏԱՆԵԱՆ (32)

ԹԻԱՊԱՐՏԸ

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

ՈՃԻՐԻՆ ԵՏԻՔ

Շարաթ մը անցաւ ոճիւրէն ետքը:
Վալի փաշա, առանց յապաղելու,
հրամայեց որ Վանականին դատաւա-
րութիւնը կատարուի հրապարակաւ:
Արդարեւ, եղեռնական դատարանը
հրապարակային յայտարարութիւննե-
րով բոլոր քաղաքացիներուն իմացուց
Վալիին հրամանը:
Վանական, որ ոճրագործներու ա-
ռանձնարարին մէջ քաջկոտուած էր
անարկու շղթաներու տակ, ամենեւեմ

* * Բացարձակապէս հաստատադ-
րուէ մը կիմանամ թէ լրտեսնե-
րու և ոստիկաններու իրարանցման
պատճառն է կառնա՞ մը, ըստ ո-
րում կը վախճուի թէ երիտասարդ
թուրքերը ապստամբական շար-
ժում մը պիտի կատարեն և Պոլ-
սի մէջ. — աշնան:

Միւս կողմանէ, ուրիշ իրարան-
ցում մը կը տիրէ թուրք շրջաննե-
րու, և թրքաշատ թաղերու մէջ,
որովհետեւ լուր տարածուած է թէ
Կ. Պոլսի մէջ հաստատուած է
Մականդոնա Ալպանական կոմիտէի
մի կարեւոր մասնաճիւղը, բան մը
որ չափազանց կը վրդովեցնէ առ-
հասարակ բոլոր թուրքերը որոնք
նախանձախնդիր են թուրք կայս-
րութեան ամբողջականութեան:
Թուրք խումանն ալ զայրացած է
այդ կոմիտէին դէմ որովհետեւ նա
«Վերը՝ Ալլահ, Վարը՝ փառքը»
կը ճանչնայ:

Այսպէս ժողովուրդը Գու-
տա-Փաշայի ապարանքը-ուր դէմ
կապրի աքսորեալ փաշային գրեթէ
ամբողջ ընտանիքը-խիստ հակողու-
թեան տակ է: Այդ ընտանիքը
սարսափ կազդէ Սուլթանին:

* * Բունաց Թովակիմ Պատրիարքը
պաշտօնապէս ճանչնող պէրաքը
վերջապէս ելաւ և զրկուեցաւ Բու-
նաց Պատրիարքարանը, այդ հրո-
վաճարակին վրայ կը կարգացուի
հետեւեալ նախադասութիւնը,
«մուճէպինճէ ամէլ օլանա» (բովան-
դակութեան համեմատ կատարուի)
որ դրուած է բուն իսկ Սուլթանի
ձեռքով. բան մը որ յաճախ չի
պատահիր, որովհետեւ միշտ այս
տեսակ թղթերը կը ստորագրէ
Մեծ-Վէզիրը՝ Սուլթանին հրամա-
նին համեմատ և կը գրէ. «Տիրոջը՝
Սուլթանի բաղձ սնօք և հրամանով,
թո՛ղ կատարուի բովանդակութեան
համեմատ»: Մեծ-Վէզիրի ստո-
րագրութեան բացակայութիւնը,
և այդ պէրաթին վրայ Սուլթանի
ստորագրութիւնը մեծ ազդեցու-
թիւն գործեց զանազան շրջաննե-
րու մէջ, Պաշտօնական շրջաննե-
րու մէջ կըսեն թէ Թովակիմի

չարստաց, երբ իրեն ալ իմացուց
բանտապահը:

— Ինչ ընեմ... Աստուած կայ,
միմիջեց Վանական:

Յետոյ զիջեցիկ զուխը վեր առնե-
լով, անվերջ ձայնով մը հարցուց.

— Ե՛րբ պիտի սկսի դատաւարու-
թիւնս:

— Վաղը չէ՛ միւս օրը, պատաս-
խանց բանտապահն՝ որ բարեմիտ
թուրք մըն էր:

— Աւելի աղէ՛կ... նկատել տուաւ
Վանական:

Երկու օրն ալ անցաւ:

Առաւօտ մը երեք ոստիկաններ,
բանտապահին առաջնորդութեամբ, իր
առանձնարարին դռնը բացին ու ներս
մտնելով քակեցին ոտքերուն զարնը-
ռած շղթաները, միայն ձեռքերը
կաշկանդեցին և դուռն հանեցին զին-
քը:

Երբ դատարանը մտաւ, Վանական
իր աչքը դարցուց ա՛յն հոծ բազմու-

խնդրոյն մէկ տարի ձգձգուելուն
պատճառ եղեր է Մեծ-Վէզիրը՝
Սաիտ-Փաշա, որ սաստիկ հակա-
ռակ է եղեր այդ յոյն կղերական-
ներն: Գարձեալ պաշտօնական շր-
ջաններու մէջ կըսեն թէ Մեծ-Վէ-
զիրը ստիպուած պէտք է հրաժա-
րի իր պաշտօնէն, քանի որ Սուլ-
թանը հակառակ իր ընդդիմու-
թեան՝ Թովակիմի Պատրիարքու-
թիւնն ընդունեցաւ, ուստի և իր
միներսորին վրայ անվստահու-
թիւն ունեցաւ: Եղելութիւնն այն
է որ Մեծ-Վէզիրը այժմ Բ. Դու-
ւը չի գտնուիր. ոմանք կըսեն
թէ հրաժարական տուեր է. ու-
րիշներ կը կարծեն թէ գիւղ գա-
ցեր է ապաքինուելու համար...:
Եթէ իրաւ հրաժարականը տուած
է Սաիտ, Թովակիմը զայն տա-
պալած պիտի լինի, որով այդ
յոյն Պատրիարքը առաջնակարգ
դիւանագէտի մը խմորը ունեցած
պիտի լինի: Կըսեն թէ Սուլթա-
նէն շատ սիրուած է այդ մարդը
և անոր վստահութիւնը կը կրէ...:

* *

Ալպանական խնդիր

Քորֆու, 23 Յուլիս. — (Էսք-
Ուէսք ի յատուկ թղթակցէն):

Ամբողջ Ալպանիոյ վիճակը խիստ
տօքնապալց է, տեղացի պէկերը
անխնայօրէն կը զարնեն, կը ջար-
դեն կը թալեն մասնաւորապէս
տեղական թուրք ժողովուրդը և
թրքական հաստատութիւններն ու
կառավարութիւնը: Եթէ հազարէ
աւելի Ալպանացիներ՝ լաւ զինուած
կը շրջին Ալպանիոյ մէջ, թուրք
իշխանութիւնը այլ եւս անկարող
է ու է ազդեցութիւն գործել: Ա-
լպանութիւնն ըսած բանը բոլո-
րովին վերցիր է Ալպանիայէն:
Պէտք է իշխել մասնաւորապէս ի
նկատի առնել և այն անհրաժեշտ
զինութիւնը որ աւստրիացի և ի-
տալացի յանձանձիւներ չընելով
Ալպանիոյ հիսիւսային կողմը,
ժողովուրդի ոգիները կը գրգռեն:
Արդէն ժամանակին ձեզ գրեցի
Մօնթէնէկոօի սահմանագլխին վը-

րայ պատահած պատերազմին մա-
սին: Ալպանացիք Մալայ-Բէկի
հրամանատարութեան տակ, Մօն-
թէնէկոօցի զօրքերու հետ կռուե-
ցան շարունակ երեք ժամ: Մօն-
թէնէկոօցւոյ կողմէն մեռաւ Սա-
վաս Տիմբուս անուն մի ենթասպայ
և եօթը զինուոր, իսկ Ալպա-
նիացիք մէկ զոհ և երկու վիրաւոր
ունեցան: Ալպանիացիք մեռած
Մօնթէնէկոօցի զինուորներու հրա-
յանները և վրանին ունեցածները
առնելով փախան: Մօնթէնէկոօ
ինչպէս և թուրք կառավարութիւ-
նը մեծամեծ զնդեր դրած են սահ-
մանագլուխներու վրայ:

Էսք-Ուէսք

Բարիք, 30 Յուլիս

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

ԲԱՐԻՁ, 25 Յուլիս

Յրանալիս գործեր. — Մեր անց-
եալ թղթակցութեան մէջ ըսինք թէ
Յրանսան դարձեալ երկուքի բաժ-
նուած է կրօնական միաբանութեանց
խնդրոյն առթիւ, ըսինք նոյնպէս թէ
զանազան ցոյցեր եղան, բայց այդ
ցոյցերուն ամենակատարին տեղի ու-
նեցաւ անցեալ չորեքշաբթի երեկոյ,
ուր կարեւոր դեր խաղացին ոչ միայն
զաւազանները այլ և վեցհարուած-
եաններն ալ: Յիսուսի կաթողիկ կու-
սակցութիւնը լատինական թաղին մէջ
մեծ ժողով մը սարքած էր, կրօնա-
ւորներու արտաքին ղեմ բաղքելու
համար: Ընկերվարական-իդալիստա-
կան կուսակցութիւններն ալ—ըստ
բաղմանց՝ զրդուելով կառավարութե-
նէն—հակացոյց մը սարքեր էին կա-
ռավարութեան ոյժ տալու եւ անգամ
մը եւս ցոյց տալու թէ իրենք բա-
ցարձակապէս հակառակ են կաթողիկ
եւ կղերական կուսակցութեան, որն
ըստ իրենց զաղափարին՝ նախօրինակ
եւ ընդդիմական կուսակցութիւնը կը
ներկայացնէ, թէպէտ շատ կաթողիկ-
ներ կան որոնք թուեղ հասարակա-
պետականներ եւ ընկերվարականներ
են ինչպէս որ շատ ու շատ նասիօնա-
լիստ եւ ընդդիմականներ կան որոնք
ոչ միայն կաթողիկ եկեղեցւոյ պատ-
ուէրները չեն պահեր այլ և իրենց ե-
րեսայները միտել չը տալու չափ ա-

կի մը աչքերուն մէջ: Կարծես թէ ա-
ւելի գեղեցկացած էր, աւելի՛ յանկու-
ցել արտայայտութիւն մը առած էր
իր կերպարանքը, աւելի՛ պաշտելի
եղած էր ան սուրբի մը պէս, եւ իր
փափուկ մօրեքը, թաթուռն պիտե-
րը, զիմագծերու ձուածեւ կազմուածքն
աւելի՛ ներդաշնակուած էին իրարու
մէջ:

Եղեռնագործներու յատուկ աթոռին
քով կեցաւ:

Դատարանը խորին լուրջեան մէջ
էր:

Հարցաքննիչ դատաւորը նախապէս
ոտքի ելաւ ու ընդհանուր դատախա-
զին իր տեղեկագիրը կարդաց:

Ահա՛ այս տեղեկագիրը:

«Ասկից երեք շաբաթներ առաջ Վա-
րագայ լեռան ետին գտնուող գեղի մը
մէջ ձերբակալուած այս թափառաշը-
րիկ դատարկապորտին անունը՝ ըստ
իր յայտարարութեան՝ ինչպէս է, մա-
կանուելը՝ Մերենց, իսկ ծնած գիւղը՝

ուսման գնացել ու կերթան անկրօնութեան մէջ:

Ուրեմն անցեալ չորեքշաբթի երեկոյ երկու ցոյցեր սարքուած էին եւ այդ ցոյցերու վայրն էր լատինական կամ ուսանողական թաղը:

Օթէլ տէ Սօսիէթէ Սաւանթ կոչուած շէնքին ընդարձակ դահլիճին մէջ մօտ 5,000 հոգի խոնուած էին, մօտ 2,000 ալ պալատին դրան առջեւ կը գտնուէին որովհետեւ ներսը այնչափ տեղ չը կար: Ի՞նչ քանի անձինք կարգաւ խօսք առին եւ պարսաւեցին ու դատապարտեցին կառավարութեան ընթացքը, եւ առաջարկեցին քուէարկեցին... ասոնք բողոքողներն էին: Իսկ ընկերակցական յեղափոխականները թուով մօտ հազար հոգի խուժը խուժը հաւաքուեցան փանթէոնի հրապարակին վրայ եւ այն տեղէն երգեր երգելով առաջացան մինչեւ բուլվար Յէն Միշել հակառակ քաղաքապետներու դիմադրութեան, յետոյ ուղեցին երթալ կոխել կաթոլիկներու ժողովատեղին որ բուլվար Սէն Միշելի վարի կողմը՝ ձախ թուի վրայ կը գտնուի, ոստիկանները անոնց առջեւ կտրեցին եւ ուղեցին արգելիլ առաջ երթալու, բայց անօգուտ եղաւ որովհետեւ ցուցարարները ձախքանին փոխելով եւ փոքր խմբերու բաժնուած հասան Օթէլ տէ Սօսիէթէ Սաւանթի դուռը, բայց այնտեղ նոր եւ մեծ յուսախաբանութիւն մը իրենց կը սպասէր: չէնքին դուռը խիստ ամուր պահուած էր ոստիկաններու, զինուորներու եւ հեծելազօրներու մի քանի ջոկատներով...:

Այնտեղ սկսաւ բերանացի կռիւ, յեղափոխական-ընկերակցականները կը պոռային «անկցի՛ր գողկը»-գողկը՝ կը նշանակէ կղերական կուսակցութիւնը կամ աւելի լայն մտքով կաթոլիկութիւնը եւ կրօնական զգացմունքը-«կեցցէ՛ր» ընկերակցականութիւնը, եւ ուրիշ համայնական խօսքեր, որոց կը յաջորդէին յեղափոխական եւ անիշխանական երգեր: Ըսինք թէ դահլիճի դրան առջեւ խոնուած էին մօտ երկու հազար բողոքողներ, ասոնք ալ սկսան պատասխանել յեղափոխական-ընկերակցականներուն «սղաքութիւն, ազատութիւն» պոռալով: Փոքրիկ իրարանցում մը առաջ եկաւ, փայտերը բարձրացան, ոստիկանները միջամտեցին, գոռում գոչում, ճիշդ... մի քանի հոգիներ ձերբակալուեցան երկու կողմէն:

Բայց ցոյցերն իրենց դադարեցան անոր հասան երբ բողոքողներու (կաթոլիկ կուսակցութեան) ժողովը վերջացաւ, այս միջոցին բուլվար Սէն

Միշելէն եւ բուլվար Սէն Ժէրմէնի մէկ մասէն անցնելու բացարձակապէս անկարելի էր, առանց չափազանցութեան տասը հազար հոգի այնտեղ խոնուած էր, անհնարաբար իրարանցում մը, ընդհանուր կռիւ մը, կիները կը ճչէին, մարդիկ կը պոռային, ուրիշներ կերգէին, տեղ տեղ իրարու գլուխ կը կտրուէին, սրճարաններու առջեւ-բուլվար Սէն Միշելի աջ եզերքին վրայ միայն մէկ տու գինէն աւելի շատ սրճարաններ կան-աթոռներով կը կուռէին... յանկարծ ատրճանակի պայթումներ ալ լսուեցան, երիտասարդ մը սրճարանի մը առջեւ ծուռգէն վիրաւորուած ինչեւէ, ոստիկանութիւնը բոլորովին անկարող լինելով երթեկուծութիւնը ապահովել, ժողովուրդը հանգստացնել, կռուողները բաժնել, հեծելազօր գնդին հրաման տրուեցաւ յարձակիլ երկու ցուցարար խմբերու վրայ... բայց վերջիններուն գործն ալ զիրիւն չէր որովհետեւ ամբողջ շատ բազմաթիւ լինելուն առաջնաւոր իրիտ դժուար էր: Վերջապէս կէս գիշերն անցեր էր երբ բուլվար Սէն Միշելը մի քիչ հանդարտեցաւ, ցուցարարներն ալ ու ձախ տարածուէր էին զանազան մեծ ու պզտիկ խմբերու բաժնուած: Զորեքշաբթի օր երեկոյեան ժամը 9ին մինչեւ առաւօտեան ժամը երկուքը լատինական թաղին մէջ եւ շրջակայքը հարիւր յիսունէ աւելի անձեր ձերբակալուեցան:

Մելիք Ս. Դաւիթ-Բեկ

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Շնորհակալութեամբ ասացանք Ֆրանսերէն Բօկի Պառլեմէնտ (հայկական բանաստեղծութիւնը) նոր հրատարակութիւնը: Այս գրքոյկին առաջին մասը կը բաղկանայ Տ. Կապրիէլ Մուռէի մէկ ատենախօսութենէն հայ բանաստեղծութեան և արուեստի մասին, զոր արտասանած է ներկայ տարւոյ Մայիս 29ին Բարիզի մէջ, ինչպէս չէ հայ որբերուն կազմակերպուած երեկոյթին. գրքոյկին մնացեալ մասը կը պարունակէ հին և նոր բանաստեղծութեանց մէկ քանի ընտիր կտորներ ու ժողովրդական երգեր, թարգմանուած Տ. Արշակ Չապանեանէ:

—Նախ՛ ևս ո՛չ դատարկապորտ եմ եւ ո՛չ ալ թափառաշրջիկ մը, առարկեց Վանական այնպիսի ձայնով մը, որուն մէջ իր հոգւոյն ամբողջ վեհութիւնը գրած էր: Յետոյ՝ բացարձակապէս զրպարտած են զիս, իմ հարցաքննութիւններս հակասական ու երկգիծի նկատելով:

—Թո՛ղ այդպէս ըլլայ... ընդհատեց արդարութեան ներկայացուցիչը բիրտ ձայնով մը: Գործած ոճիւրդ համար ի՞նչ պիտի ըսես:

—Վանական արհամարանքով մը այդ մարդուն երեսը նայեցաւ, քմիծաղ մը պատկերացուց իր հրեշտակային կերպարանին վրայ ու գոչեց:

—Ես գործեցի այդ ոճիւրդ:

—Պատճառ...:

—Պատճառը շատ պարզ է:

—Ոոստովանէ՛, թշուառական,

բացազանչեց հարցաքննիչ-դատաւորը՝ չկրնալով ինքզինքը զսպել:

—Վանական պահ մը կանգ առաւ...

—Ստացանք Գոռքաւի և Արտեմիսի վերջին թիւերը. ուրախ ենք որ այս երկու օգտուշտ հանգէսները կարճը հատուած մը լստոյ վերսկսան հրատարակուիլ. կը մաղթենք որ գոնէ ասկէ վերջ յարատեւօրէն ու պարբերաբար հրատարակուին անոնց լաճորդ թիւերը:

—Վանէն՝ Տեղապահ Տ. Սահակ Եպս. յրազրաց մէջ կարգաւոր որ Օսմանիէ թէզգէրէ չունեցողները վեց ամիս պայմանաժամու մէջ առանց տուգանք վճարելու պիտի կրնան առնել կառավարութեան արտօնութեամբ, հարցուցած էր Պատրիարքարանի թէ ճիշդ է այդ տեղեկութիւնը, ըստ որում տեղային կառավարութեան կողմէ այդ մասին ու եւ տեղեկութիւն հաղորդուած չէ իրեն: Պատրիարքարանէն հեռագրաւ ծանուցուեցաւ թէ կառավարութեան կողմէ պաշտօնապէս Պատրիարքարանի ալ ծանուցուած է այդ թոյլտուութիւնն և թէ տնտարակոյս գաւառաց կուսակալներուն ալ նոյն մտօք հրահանգներ տրուած են:

Բիզանդիոն

—Տիկին վառվառէ Բանանահան, Լազարիան Ճեմարանի հանգուցիւ վերադառնալին կրնար, գրական հրատարակութեամբ մը 600 բուլկի գումար մը շահած ըլլալով, զայն զրկեր է Պատրիարքին, Որբանոցներուն համար գործածուելու:

—Իպրաիլի մէջ աշխատող Շապին Գարահիսարի Պուսէյտ գիւղացիք 200 ֆրանք հաւաքելով Պատրիարքարան զրկեր են՝ իրենց գիւղի Ս. Գէորգ եկեղեցւոյ նորագոյնութեան պէտքերն համար:

—Գուստենիէ Պատրիարքարանի գիմնասիւնը եղած են Գիւղական 23 նոր վարժարաններ բանալու համար: Բայց Նպաստեց Գանձաժողովը նկատելով որ իր սնտուկին դրամական միջոցներն առայժմ չեն ներեր նոր վարժարաններ յանելու, յետագայ մը այդ գիմնասիւններուն նկատառումը պատահ ժամանակին:

—Մարաշի Լէնիճէ գիւղին մէջ

սաստիկ կարկուտ տեղալով մեծ վնասներ հասուցեր է. գիւղացի ժողովուրդն կարօտութեան ենթարկուելով օգնութիւն խնդրած է: Նպաստեց Գանձաժողովը 20 ոսկի զրկեց այդ արկածեալներուն համար:

—Նպաստեց Գանձաժողովը նկատելով թէ կարգ մը որբանոցներու տնտղութեան չըլանը յրացած է և նկատելով թէ տեղական միջոցներ ձեռք առնուած են արգէն նոյն որբանոցներուն մէջ զըտնուող տղայոց վեճակը ապահովելու համար, որոշեց նպաստը դադարեցնել: Ըստ որում դադարած են կարնոյ կարմիր վառնոց, Արաբկիրի, Վանայ կարմրուորի վառնոց, խարբերդի խուլէ վառնոց, Բալուի և Բաղէի որբանոցներուն թոշակները և մասամբ ալ Վանայ Սալնապատի աղջկանց որբանոցի թոշակները:

Իսկ Չէյթուշի սրբանոցին տնտղութեան չըլանն ալ յրացած և նպաստը թէեւ դադարած էր, բայց Հոգաբարձութենէն հասած յայտագրէ մը իմացուելով որ զեռապէս կան պաշտպանութեան կարօտ, յանձնաժողովը որոշեց այդ որբանոցի թոշակը մասամբ շարունակել:

ՈՒՇԱՆԻՐՈՒԹԻՒՆ

Ասկէ առաջ մեր մէկ քանի թիւերով ծանուցած ենք թէ՛ դադարի պատճառաւ քանի մը թիւ պաշտաւ հրատարակելու փոխարէն «Միմունջ Հայկական» երգարանը կամ «Հայրենիքի գոհեր» գիրքը՝ որն որ ընտրեն, կէս ֆրանկի փոխարէն պիտի զրկենք մեր բաժանորդներուն:

Բայց ոմանք այդ կէս ֆրանկը չստի ու իրենց բաժնեգրին պարտքը չիշխել ձեւացնելով քարտ մը կը գրեն մեզ որ ծանուցուած գիրքերէն մին զրկենք:

Այսպիսիներուն տեղում մըն ալ կը յիշեցնենք թէ՛ որոնք որ իրենց բաժնեգրին վրայ կէս ֆրանկ ալ աւելցնելով մեզ զրկեն, անոնք միայն կըստանան այդ գիրքերէն մին: Իսկ ներկայ տարւոյ բաժնեգրինը ամբողջ վճարողներուն պատրաստ ենք զրկել, եթէ կէս ֆրանկ չի նամակագրոյ մեզ զրկեն:

ճիս արդար ձայնէն թելադրուած:

—Թշուառական... ընդհատեց կրօնաոր մօլլան: Ինչպէս... խղճիդ ձայնը թելադրեց քեզ ոճիւրդ գործելու:

—Ի հարկէ: Որովհետեւ ոճիւրդ կան զորս մարդիկ խղճի արդար ձայնէ մը թելադրուած կը գործեն, չնչտեց Վանական. ըսել կուզեմ թէ Աստուած կը հրամայէ:

—Լո՛ւ՛, անգգա՛մ, ընդհատեց մօլլան՝ իր նստած տեղէն սարսուղով: Աստուծոյ անունը բերանդ մի առնիր:

—Ուրեմն ի՞նչու կը պահանջէք որ խօսիմ, առարկեց Վանական հեղափոխու խորին ատելութիւն մը արտայայտող ձայնով մը: Ինձի մնայ, բաւական է որ մեծ-դատաւորը սպաննած եմ, ըսի: Տուէ՛ք ձեր վճիռը, թո՛ղ ամեն բան վերջանայ:

(Շարունակելի)

Նորաչէն: Տարիքը՝ քսանութն է, իսկ արեւստը՝ երկաթագործութիւն: հարցաքննութեանց մէջ շարունակ երկգիծի մի ու հակասական եղած է:

Այս տեղեկագիրը, ինչպէս յայտնի է, պատրաստուած էր Վանականին ոճիւրդ գործելէն առաջ: Այժմ ընդհանուր դատախազին կը մնար գիտնալ թէ Վանական ի՞նչ հանգամանքներու տակ եւ թէ ի՞նչ պատճառներէ թելադրուած համարձակեր էր մեծ-դատաւորն իր պաշտօնատեղւոյն մէջ սպաննելու:

Տեղեկագիրն ընթերցումէ ետքը, հարցաքննիչ-դատաւորը նստեցաւ կանանչ սեղանին շուրջը՝ ա՛յն երեք հիւրէշներու քով, որոնց մին կրօնաւոր մօլլա մըն էր:

Վանական անվեհեր ու վսեմ գիրքի մը մէջ՝ սպասեց:

—Այս տեղեկագիրը ճիշդ է, հարցուց ընդհանուր դատախազը՝ Վանականին աչքերուն խորը քննելով:

